

ԿԱՐԾԻՔ

Լուսինե Աշոտի Ենգոյանի՝ «Գոյականի ձևաբանական զուգածեռթյունները հին հայերենում»
Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հայտնի է, որ զուգածեռթյունների գոյությունը լեզվի զարգացման գործընթացի արտահայտությունն է, և չի կարող լինել մի լեզվավիճակ, որ կողք կողքի հանդես չգան տարբերակային ձևեր՝ նախընտրելի կամ ոչ նախընտրելի: Զուգածեռթյուններ կան լեզվի տարբեր մակարդակներում՝ հնչյունաբանական, բառակազմական, ձևաբանական, շարակայուսական և այլն:

Լուսինե Ենգոյանի ատենախոսությունը նվիրված է հին հայերենի ձևաբանական որոշակի կարևորություն ունեցող այդ հարցի՝ քերականական զուգածեռթյունների քննությանը, մասնավորապես՝ գոյականի հոլովական և թվակազմության զուգածեռթյուններին:

Բազմադարյա մեր լեզվի պատմության ընթացքում գոյացել են բազմազան տարբերակներ՝ առաջացման ուրույն ուղիներով, որոնք ի մի քերելը մեկ քննության հարթության մեջ նախ՝ կարող է ցույց տալ այդ զուգածեռթյունների բնույթը, բաշխվածությունը 5-րդ դարում, ապա՝ հայերենի հետազա փուլերում հնարավորություն կտա դրանց զարգացումը դիտարկելու: Քանի որ ինչպես 5-րդ դարի երկերի լեզվում արտացոլված ենք գտնում նախորդ դարերի լեզվական զուգածեռթյունները, այնպես էլ հետզրաբարյան շրջանն է ժառանգում կամ առաջացնում հատկապես քերականական բազմազան զուգահեռ ձևեր, որոնք արտացոլված են ուշ շրջանի երկերի լեզվում: Եվ այս ամենը հայոց լեզվի զարգացման ամբողջ ամիսների շղթան բացահայտելու փաստեր են:

Ի սկզբանե պետք է ասել, որ ատենախոսը 5-րդ դարի մի շարք երկերից հավաքել դասակարգված ներկայացրել է հոլովական ու հոգնակիակազմության զուգածեռթյունների դրսևումները, փաստերը և մեկնաբանել դրանք:

Ներածության մեջ զուգաձևությունների մասին քերականական անդրադարձներ կատարելիս՝ սկսած Դ. Թրակացու մեկնություններից մինչև մեր օրերը, թվում է, այս ոլորտի որևէ բան բաց թողնված չէ հայերենագիտությունից, մանրամասն ներկայացված են գրաբարին ուղղակի նախորդող շրջանի հնչյունական, ձևաբանական և այլ տարրերակները։ Դեռք է շեշտել հատկապես առանձին հոլովաձևերի կամ կառուցատիպերի հստակ թվային հաշվարկը աշխատանքում, որի միջոցով ցույց է տրվում դրանց բաշխվածությունը 5-րդ դարում, միայն թե հետևողական լինելու դեպքում հեղինակը կարող էր կազմել վիճակագրական խոսուն ցանկեր կամ ամփոփումներ։

Ուշագրավ է հատկապես աշխատանքի 2-րդ գլուխը, որտեղ քննվում են զոյականի հոլովական զուգաձևությունները հին հայերենում՝ կապված լեզվի զարգացման ընթացքում բարերի քերականական խմաստների արտահայտման միջոցների փոփոխության հետ, որի հետևանքով առաջացած լեզվական զուգահեռ ձևերը զոյակցում են լեզվի համաժամանակյա կտրվածքում մինչև դրանցից մեկի հաղթանակը։ Այստեղ երևում են ատենախոսի գնահատելի լեզվազգացողությունը և նյութի քաջիմացությունը։ Հեղինակը փաստում է, որ ակնհայտորեն մեր լեզվի զարգացման արդի փուլում ձևաբանական համակարգի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի նաև խոսքի մշակույթի տեսանկյունից։

Ատենախոսության տարբեր բաժիններում նախևառաջ տրվում են քերականական զուգաձևությունների այս կամ այն դրսերումների տեսական հիմնավորումները, ապա դրանք վերաձևվում են հին հայերենի տվյալների վրա։ Կարծես չկա թեմայի հետ առնչվող հիմնարար աշխատություն, որ շրջանցած լինի հեղինակը։

Գոյականական զուգաձևությունների համաժամանակյա ուսումնասիրությունը կարևորվում է երկու առումով, առաջին՝ այս հետազոտությամբ որոշակի գաղափար ենք կազմում հինգերորդ դարի զուգաձևությունների վերաբերյալ, երկրորդ՝ սույն ուսումնասիրության արդյունքները կարող են համեմատության եզրեր դառնալ նույն իրողության տարժամանակյա քննության համար։

Աստենախոսությունն ունի հավելված-բառարան, որտեղ գետեղված են 5-րդ դարի մատենագրության մեջ հոլովական զուգաձևություններ դրսերող բառերը, որոնք առավել տեսանելի են դարձնում հայերենի քննվող շրջանի զուգաձևությունների փաստերը:

Ինչպես ցանկացած գիտական ուսումնասիրություն, սույն աստենախոսությունը ևս գերծ չէ որոշակի վրիպումներից, բացթողումներից, որոնք գրեթե չեն ստվերում կատարված հսկայական աշխատանքը, և որոնք նշում ենք աշխատանքը առավել անթերի տեսնելու անկեղծ ցանկությամբ: Ահավասիկ դրանցից մի քանիսը, թերևս ամենից կարևորները:

1. Աստենախոսությունը և նրա առաջին գլուխը ունեն բացարձակապես նույն վերնագիրը, որը, մեղմ ասած, ընդունելի չէ: Գլուխ Ա-ն կարելի էր տարրալուծել ներածության և հաջորդ՝ բ զիսի մեջ՝ հոլովական զուգաձևությունների կառուցատիպերի մասով:

2. 5-րդ դարի հեղինակների երկերի հնագույն օրինակները պահպանվել և մեզ են փոխանցվել շատ ավելի ուշ՝ 12-14-րդ դարերից, և 7-9 հարյուրամյակի տարբերության դեպքում դժվար է քննվող օրինակները անվերապահ համարել 5-րդ դարի փաստեր: Զևարանական, հնյունական զուգաձևությունների, տարբերակների, տարբնթերցումների մի մասը ուշ շրջանի միջամտություններ են, հաճախ ուղղակի գրչագրական փոփոխություններ: Դրանց մասին աշխատանքում մեկ-երկու տեղ ակնարկ կա, սակայն նկատելի է, որ հեղինակն իր քաղած բոլոր տարբերակները անխտիր դիտարկել է միևնույն հարթության մեջ:

3. Աշխատանքում սահմանված չենք գտնում «հին հայերեն» հասկացությունը, որ բերված է վերնագրում, բայց ներածության սկզբում տեսնում ենք, որ ընտրանքը 5-րդ դարի ինքնուրույն հեղինակներն են, որոնց երկերի լեզվական տվյալների հիման վրա կատարվել է «զուգաձևությունների համաժամանակյա քննություն»՝ ըստ հեղինակի (եջ 4): Տարբեր էջերում հանդիպում ենք *զրաբարի, հին հայերենի, դասական զրաբարի զուգաձևություններ* ձևակերպումները, որոնք, անշուշտ, նույնական չեն:

4. Ներածության մեջ չկա քննության մեջ ներառված բառերի, զուգաձևությունների ընտրանքի տեսություն՝ ի՞նչ սկզբունքով են դրանք քաղվել, արդյո՞ք ողջ պաշարն է

քարտագրվել ու քննվել: Այդ դեպքում պարզ կլիներ նաև, թէ փաստերը քաղվել են բնագրերից, բառարաններից, թէ՝ համարաբառներից:

5. Կարծում ենք՝ քերականական զուգաձևությունների հատկապես իմաստային տարբերությունները ներկայացնելիս բառային տարբերակների փոխարեն ավելի շատ կարող են լինել որպես օրինակներ քերվող նախադասությունները՝ առավել ակնառու ցույց տալու համար զուգաձևությունների իմաստային նրբերանգները, մանավանդ որ բառային տարբերակով դրանք հավելված-բառարանում արդեն իսկ առկա են:

Ամփոփելով նշենք՝ վերոբերյալ թերացումներն ու դիտարկումները չեն ստվերում հեղինակի՝ գիտական բարեխաղացմար և նյութի լիարժեք իմացությամբ կատարած աշխատանքը, որն աչքի է ընկնում տեսական աղբյուրագիտական հարուստ նյութի ընդգրկմամբ. ուսումնասիրված են թեմային առնչվող շուրջ 60 հայ և օտարազգի հեղինակների գործեր, ինչպես նաև մատենագիտական երկեր, համարաբառներ, բառարաններ: Ատենախոսը ձգտել է նյութի քննությունը կատարել լայն ընդգրկմամբ, բարեխաղացորեն և զիտական լրջությամբ: Արդյունքում ստացվել է հետաքրքիր և փաստառատ ուսումնասիրություն՝ նյութի ներկայացման ամրողականությամբ, մանրամասնորեն, փաստարկումների հիմնավորմամբ, լեզվական իրողությունների ներկայացմամբ և դրանց հեղինակային ճիշտ ընկալմամբ:

Ատենախոսությունը շարադրված է զիտական պատշաճ մակարդակով, առաջադրված խնդիրները լուծված են հետևողականորեն: Յուրաքանչյուր գլուխ ավարտվում է եզրակացություններով, ատենախոսության վեջում արված եզրակացությունները բխում են քննության բուն նյութից և ամփոփում կատարված աշխատանքը:

Սեղմագրում ներկայացված դրույթները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը, հրապարակված հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը: Գովելի է, որ ատենախոսն իր աշխատանքը հրատարակել է իբրև առանձին մենագրություն՝ «Գոյականի զուգաձևությունները 5-րդ դարի մատենագրության լեզվում» խորագրով:

Այսպիսով՝ Լուսինե Ենգոյանի՝ «Գոյականի ձևաբանական զուգաձևությունները հին հայերենում» աշխատանքն իր առաջադիր խնդիրների շրջանակով, դրանք լուծելու գիտական խորությամբ և քերած նորույթով համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից Ժ.02.01

թվանիշով «Հայոց լեզու» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությաններին ներկայացվող պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ միջնորդում եմ ԲՈԿ-ի՝ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող 019 մասնագիտական խորհրդին՝ ատենախոսության հեղինակ Լուսինե Աշոտի Ենգոյանին շնորհելու իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

 U. S.

Ա. Աբաջյան

Ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար՝

Մ. Հովհաննիսյան

10.06.2022

